

Ի Բ

ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ
 ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԲԵՓՂԵՀԷՄԻ ՄԷՋ

Երկու Աւետարանիչները՝ Մատթէոս (Բ) եւ Ղուկաս (Բ) կը պատմեն Փրկչին Ս. Ծնունդը Բեթղեհէմի մէջ: Հատ գրաւոր յիշատակարանաց եւ աւանդութեան, Քրիստոս ծնուալ այրի մը մէջ, թէ և այր բառը Աւետարանիչները որոշապէս չեն յիշեր. բայց Աւետարանին մէջ յիշուած մտաւ բառին գոյութենէն յայտնի է թէ Փրկչին ծննդեան տեղը բնակութեան կամ տան վերածուած այրի մը մէջ էր. բաց աստի, չենք կրնար ալ ըսել թէ այրը Աւետարանին մէջ չէ յիշատակուած. քանի որ Լազարեան ձեմարանին ծանօթ հայ ձեռագիր (Թ. դար) Աւետարանը կը յիշատակէ այր բառը. «Եւ նոքա իբրև լուսն թագաւորէն՝ գնացին, և ահա աստղն զոր տեսին յարեելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց՝ ի վերայ այրին ուր էր մանուկն (Մատթ. Բ. 9): Այս տարբերակը առուելապէս կը հաստատուի մեր Շարակնոցին Աստուածայայտութեան կանոնովը, ուր բազմիցս կը յիշատակուի այրը (*):

Քրիստոսի ծննդեան աւետարանական մանրամասնութիւնները հոս չենք յիշեր, Աւետարանները կը պատմեն զանոնք: Մենք միայն պիտի ջանանք նկարագրել Քրիստոսի Ս. Ծննդեան այրը, անոր վրայ կառուցուած եկեղեցին ու դարէ դար կրած

(*) Ս. Ներսէս Շնորհալին կ'ըսէ.— «Եւ ո՞ւր արդեօք ունէին տուն. քանզի վասն աշխարհագրին որ ժողովեալ էին բազումք, չէր հնար ումք տուն գտանել՝ որպէս պատմէ Ղուկաս թէ ո՛չ գոյր նոցա տեղի յիշեանին: Եւ ի ծննդեան տեղոջէ փոխել նոցա յայլ իմն տուն՝ անմարթ էր կարծել, զի մոգքն ի մտուր անդ տեսին զնա: Բայց քուի թէ զայրն կոչէ տուն, որպէս սովոր են մարդիկ զյարկ օթեանի տո՛ւն ասել»: (Մեկն. Մտթ. ի էջ 44): Շնորհալիի բնագրին մէջ չկայ այր բառը, բայց կա՛յ մեկնութեանը մէջ: